ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 847 - Ա

«ԿԱՐԻՏԱՍ-ԱՐԵԳԱԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱԳԵՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,596,924 դրամ արժողությամբ «Հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար գյուղատնտեսական դասընթացների կենտրոնի հագեցում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 05550519) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են «Հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար գյուղատնտեսական դասընթացների կենտրոնի հագեցում» ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Շավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02225359) 2024 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված՝ N CAS/24/65

պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սառնարանի մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,388,167 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շինմոլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 05544541) 2024 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված՝ N CAS/24/67 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 1,208,757 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

27.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ